

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՊԱԹՈԳԵՆՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳ

2017 թ. ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԱՄՆ-Հայաստան կենսաբանական ոլորտում ներգրավման համագործակցային
ծրագրի նպատակները

Համաձայնեցվել է

Ամերիկայի Միացյալ Նահանգների Պաշտպանության դեպարտամենտի
սպառնալիքների նվազեցման գործակալության

և

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից

19 դեկտեմբեր 2011թ.

Հայաստանի Հանրապետության կառավարություն

Հատուկ վտանգավոր պաթոգեններից պաշտպանության
համակարգ

2017 թ. ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Բովանդակությունը

I.	Ներածություն	2
II.	Նպատակը	4
III.	ԳՈՆՀԾ-ի համատեղ աշխատանքային խումբ	4
IV.	ՀՎՊ-ներից պաշտպանության համակարգ	4
V.	Շահագործման սկզբունքները	5
VI.	Կենսաբանական անվտանգություն և կենսաբանական ապահովություն (ԿԱԱ)	7
VII.	ՀՎՊ-ների հետ աշխատող լաբորատոր կառույցները	8
VIII.	Համաճարակաբանական կարողությունները	10
IX.	ՀՎՊ-ների հետ աշխատող լաբորատորիաների կլինիկական կարողությունները	10
X.	Արձագանքում ՀՎՊ-ների բոնկումների դեպքերին	11
XI.	Տեղեկացում ՀՎՊ-ների բոնկումների դեպքերի մասին	12

Հավելվածներ.

1. ԱՄՆ առողջապահության և սոց. ծառայության դեպարտամենտի և ԱՄՆ
գյուղդեպարտամենտի հատուկ վտանգավոր պաթոգենների ցանկում ընդգրկված
ախտածիններ և տոքսիններ
2. BSL-2 (կենսաանվտանգության մակարդակ-2) և BSL-3 (կենսաանվտանգության
մակարդակ-3) լաբորատորիաների համար հիմնական պահանջների ամփոփագիր

I. Ներածություն

Համաձայն 2000թ.-ի հուլիսի 24-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև կնքված «Զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի, որն ուժի մեջ է մինչ 2016թ. նոյեմբերի 25-ը՝

Հոդված 1

1. Համաձայն սույն Համաձայնագրի դրույթների՝ Կողմերը համագործակցում են զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու ոլորտում: Տվյալ նպատակն իրականացնելու համար Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը, համապատասխանաբար, կաջակցի Հայաստանի Հանրապետության կառավարությանը, վերջինիս խնդրանքով՝ տրամադրելով կամ վարձակալման պայմաններով հանձնելով սարքավորումներ, պարագաներ, նյութեր, տեխնոլոգիաներ, ինչպես նաև իրականացնելով ուսուցում կամ այլ ծառայություններ համապատասխան աշխատակիցների համար:
2. Հոդվածի առաջին կետում նշված գործողությունների հիմնական ուղղվածությունը հետևյալն է՝
 - ա/ հակազդեցություն զանգվածային ոչնչացման զենքի, ինչպես նաև նշված զենքերին առնչվող տեխնոլոգիաների, նյութերի և փորձագիտության տարածմանը
 - բ/ միջուկային, կենսաբանական կամ քիմիական զենքերի, ինչպես նաև դրանց ուղղակիորեն առնչվող նյութերի անօրինական փոխադրման, այդ թվում՝ տարանցման և տեղափոխման կանխարգելում
 - գ/ սույն Համաձայնագրի նպատակների իրականացմանն ուղղված և փոխհամաձայնեցված այլ նմանատիպ աշխատանքների իրականացում:

Համաձայն 2010թ. սեպտեմբերի 16-ին ավարտված Ամերիկայի Միացյալ Նահանգների Պաշտպանության դեպարտամենտի և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության միջև կնքված Կենսաբանական զենքերի ստեղծման համար օգտագործելի տեխնոլոգիայի, ախտածինների և փորձառության տարածման կանխարգելման ոլորտում համագործակցության մասին համաձայնագրի՝

«Ամերիկայի Միացյալ Նահանգների Պաշտպանության դեպարտամենտը (Պաշտպանության դեպարտամենտ) և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը (Արտակարգ իրավիճակների նախարարություն), այսուհետ՝ Կողմերը.

2000թ.-ի հուլիսի 24-ին «Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև կնքված Զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրն իրականացնելու համար (Հիմնական համաձայնագիր), որի նպատակն է հակազդել Կենսաբանական զենքերի ստեղծման համար օգտագործելի տեխնոլոգիայի, ախտածինների և փորձառության տարածմանը,

համաձայնվեցին հետևյալի շուրջ՝

Հոդված 1

1. Կողմերը համագործակցում են Կենսաբանական զենքերի ստեղծման համար օգտագործելի տեխնոլոգիայի, ախտածինների և փորձառության տարածման ուղղությամբ:
2. Պաշտպանության դեպարտամենտը կարող է անվճար, ըստ սույն Համաձայնագրի, տրամադրել աջակցություն Արտակարգ իրավիճակների նախարարությանը կամ վերջինիս կողմից նշանակված իրականացնող կառույցներին՝ կանխելու համար Հայաստանի Հանրապետության համապատասխան կառույցներում տեղակայված Կենսաբանական զենքերի ստեղծման համար օգտագործելի տեխնոլոգիայի, ախտածինների և փորձառության տարածումը ընդլայնելու համար կենսաբանական ահաբեկչական հարձակումների և պոտենցիալ պանդեմիաների հայտնաբերման, ախտորոշման և արձագանքման կարողությունները, ինչպես նաև նպաստելու համար համագործակցությանը ռազմավարական հետազոտությունների բնագավառում: Նշվածն իրականացնելու նպատակով Արտակարգ իրավիճակների նախարարությունը և վերջինիս կողմից նշանակված իրականացնող կառույցները կօգտագործեն սույն Համաձայնագրի նպատակների շրջանակներում տրամադրված բոլոր նյութերը, սարքավորումները, լաբորատոր պարագաները, տեխնոլոգիաները, ուսուցումը և ծառայությունները:
3. Սույն Համաձայնագիրը և վերջինիս համաձայն իրականացվող բոլոր աշխատանքները ենթակա են Հիմնական համաձայնագրի դրույթներին: Սույն Համաձայնագրի և Հիմնական համաձայնագրի միջև անհամապատասխանությունների դեպքում, գերակայում են Հիմնական համաձայնագրի դրույթները:»

Համաձայն նշված երկու համաձայնագրերի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Պաշտպանության դեպարտամենտի սպառնալիքների նվազեցման գործակալությունը (DTRA) Հայաստանի Հանրապետության կառավարության (ՀՀԿ) հետ համատեղ իրականացնում է Հայաստանում կենսաբանական ոլորտի ներգրավման համագործակցային ծրագիրը (ԿՈՆՀՕ): ԿՈՆՀՕ-ի նպատակներն են աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարությանը համապատասխանելու Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) 2005թ. Միջազգային առողջապահական կանոններին (ՄԱԿ) և Միջազգային էպիդեմիոլոգիական բյուրոյի (ՄԷԲ) հիմնական ուղեցույցներին և բարելավել Հայաստանի Հանրապետության հիվանդությունների, հսկողության, հայտնաբերման, ախտորոշման և արձագանքման համակարգերը՝ դրանց անվտանգությունը, ապահովությունը և կայունությունը ապահովելու նպատակով:

ԿՈՆՀՕ-ի իրականացման համար կազմվել է հատուկ վտանգավոր պաթոգենների ցանկ, որը ներառում է ԱՄՆ առողջապահության և սոց. ծառայության դեպարտամենտի և ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի հատուկ վտանգավոր պաթոգենների ցանկում ընդգրկված ախտածինները և տոքսինները: Ցանկը ներկայացված է Հավելված 1-ում:

II. Նպատակը

Հատուկ վտանգավոր պաթոգեններից պաշտպանության Հայաստանի Հանրապետության կառավարության համակարգերի 2017թ. գործառնությունների հայեցակարգը (Հայեցակարգ) սահմանում է ԿՈՆՀՄ-ի նպատակները՝ Հայաստանում առկա համակարգերը և կարողությունները, որոնք DTRA-ն և Հայաստանի Հանրապետության կառավարությունը համաձայնության են եկել ստեղծելու ԿՈՆՀՄ-ի շրջանակներում համատեղ աշխատանքի արդյունքում: Համաձայն տվյալ Հայեցակարգի DTRA-ն և Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախատեսում են մշակել.

- **Բացերի վերլուծություն**, որը կնկարագրի ՀՀ կառավարության ներկայումս գործող հատուկ վտանգավոր պաթոգեններից պաշտպանության համակարգերի և տվյալ Հայեցակարգում նկարագրված 2017թ. գործող համակարգերի տարբերությունները:
- **Իրականացման ծրագիր**, որը կսահմանի DTRA-ի և ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվող անհրաժեշտ քայլերը՝ հայտնաբերված “բացերի” լրացման նպատակով: Այն կուղղորդի DTRA-ին և ՀՀ կառավարությանը գալիք 3-5 տարիների ընթացքում իրականացվելիք ԿՈՆՀՄ-ի համատեղ աշխատանքային ծրագրերը կազմելու գործում:

III. ԿՈՆՀՄ Հայաստան համատեղ աշխատանքային խումբ

DTRA-ն և ՀՀ կառավարությունը կստեղծեն երկու կառավարությունների ներկայացուցիչներից կազմված Հայաստանի համատեղ աշխատանքային խումբ (ՀԱԽ), որը Երևանում կկազմակերպի ամսական կամ ըստ փոխադարձ համաձայնության հանդիպումներ ԿՈՆՀՄ-ի նախագծումը և իրականացումը վերահսկելու, Հայեցակարգի և Իրականացման ծրագրի հետ դրանց համապատասխանությունն ապահովելու, խնդիրներ քննարկելու և, անհրաժեշտության դեպքում, DTRA-ին և ՀՀ կառավարությանը բարելավման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար:

IV. ՀՎՊ-ներից պաշտպանության համակարգ

ԿՈՆՀՄ-ի շրջանակներում ՀՎՊ-ներից պաշտպանության պետական համակարգերը ներառում են առողջապահության, գյուղատնտեսության, արտակարգ իրավիճակների նախարարությունների կողմից ղեկավարվող բոլոր կառույցները, ինչպես նաև պետական այլ կառույցները, այդ թվում մարզային կառավարման մարմինները և ոստիկանությունը, ոչ պետական մարմինները, ինչպիսիք են պոլիկլինիկաները, բժիշկները, , մասնավոր անասնաբույժները, որոնք մասնակցում են մարդկանց և կենդանիների ՀՎՊ-ների հսկողության, հայտնաբերման, ախտորոշման, արձագանքման, տեղեկացման և պահպանման գործընթացում:

Դրանք մասնավորապես ներառում են.

- Նախարարություններ, ծառայություններ և պետական այլ մարմիններ, որոնք ներգրավված են վերոհիշյալ գործունեության կառավարման գործընթացում
- ՀՀ առողջապահության և անասնաբուծության ոլորտի համաճարակաբանական բոլոր տարրերը

- ՀՎՊ-ների հաստատող ախտորոշումը և/կամ ՀՎՊ-ների կարճաժամկետ կամ երկարաժամկետ պահպանումը իրականացնող բոլոր պետական լաբորատորիաները
- Ինֆեկցիոն հիվանդությունների պետական հիվանդանոցները
- ՀՎՊ-ների բոնկումների արձագանքող պետական կառույցները
- ՀՎՊ-ների բոնկումների վերաբերյալ տեղեկություններ տրամադրող պետական կառույցները
- ՀՎՊ-ների հետազոտություններ իրականացնող պետական լաբորատորիաները
- Պետական ԲՈՒՀ-երը և կրթական ծրագրերը ՀՎՊ-ներից պաշտպանության վերը նշված համակարգում ընդգրկված աշխատակիցների ուսուցման և հավաստագրման համար

V. Շահագործման սկզբունքները

ՀՎՊ-ներից պաշտպանության Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. համակարգերը կկազմակերպվեն և կգործեն համաձայն հետևյալ սկզբունքների.

Ա. ՀՎՊ-ների նմուշների երկարաժամկետ/մշտական պահպանում մեկ վայրում:

Բ. ՀՎՊ-ներից պաշտպանության համակարգում աշխատող անձնակազմի և Հայաստանի բնակչության անվտանգության ապահովում, վտանգավոր պաթոգենների տարածումից պաշտպանվածություն՝ հետևելով կենսաանվտանգության և կենսաապահովության միջազգային ստանդարտներին:

Գ. Համապատասխանություն ԱՀԿ /ՄԱԿ (Միջազգային առողջապահական կանոններ) և ՄԷԲ հիմնական ուղեցույցներին:

Դ. Հայաստանի Հանրապետության կառավարությունը արդյունավետ, ժամանակին և միջազգային, ներառյալ ԱՀԿ/ՄԱԿ և ՄԷԲ, չափանիշներին համապատասխան հայտնաբերում, ախտորոշում և արձագանքում է էնդեմիկ և էպիդեմիկ, արհեստածին և բնական ՀՎՊ-ներին, կենսաբանական ահաբեկչական հարձակումներին և պոտենցիալ պանդեմիաներին:

Ե. Մարդու և կենդանիների հիվանդություններից պաշտպանության համակարգի բաղադրիչները հիմնականում առանձնացված կլինեն յուրաքանչյուր նախարարության ներքո, սակայն համատեղ կտեղակայվեն ՀՎՊ-ների Երևանում գտնվող կենտրոնական կառույցում: Նմանատիպ տեղակայումը կարող է կիրառվել նաև այլ վայրում, որտեղ համատեղ տեղակայումը կնպաստի անվտանգության բարձրացմանը և/կամ պահպանմանը և արդյունավետ կառավարմանը:


Զ. ՀՀ կառավարությունը կարող է հոգալ շահագործման/պահպանման ծախսերը գալիք տարիների ընթացքում:

Է. ՀՀ կառավարությունը կօգտագործի ԿՈՆՀԾ-ի շրջանակներում մշակված ՀՎՊ-ներից պաշտպանության համակարգերը՝ համաձայն վերը նշված Բաժին 1-ի, սակայն անհրաժեշտության և ցանկության դեպքում կարող է այն օգտագործել ինֆեկցիոն այլ հիվանդություններից պաշտպանության համար:

Հայաստանում 2017 թ. ՀՎՊ-ներից պաշտպանության պետական համակարգի կառուցվածքային նկարագիրը ներկայացված է հաջորդ էջում.

2017

ՀԱՅԽՈՐՀԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱՆՈՒՆԱԿԱՆ ԿԵՆՏՐԱՆ



VI. Կենսաանվտանգություն և կենսաապահովություն

Կենսաանվտանգության և կենսաապահովության ապահովման հարցում ՀՀ կառավարության նպատակն է երաշխավորել Հայաստանի բնակչության և ՀՎՊ-ներից պաշտպանության համակարգում աշխատող անձնակազմի անվտանգությունը և պաշտպանել վտանգավոր պաթոգենների տարածումից: ՀՀ կառավարության ՀՎՊ-ից պաշտպանության 2017թ. համակարգը պետք է համապատասխանի կենսաանվտանգության և կենսաապահովության միջազգային չափանիշներին.

- CEN CWA 15793 – լաբորատորիաների կենսաբանական ռիսկերի կառավարում
- ԱՀԿ լաբորատորիաների անվտանգության ձեռնարկ
- ԱՀԿ կենսաբանական ռիսկի կառավարում, լաբորատորիաների կենսաապահովության ուղեցույց, WHO/CDS/EPR/2006թ.
- Անվտանգության հաստատված ստանդարտներ կոնկրետ ապրանքանիշերով կենսաանվտանգության պահարանների համար:
- ՄԷԲ Ցամաքային կենդանիների առողջության կանոնագիրք

ՀՀ կառավարությունը կսահմանի պահանջներ, չափանիշներ և ընթացակարգեր.

Ա. ՀՎՊ-ների ի հետ աշխատող կառույցների համար (BSL-2 և BSL-3 տեսակի լաբորատորիաներ/ՀՎՊ-ների պահպանման վայր).

1. Տարեկան կտրվածքով արդիականացվող կենսաանվտանգության և կենսաապահովության ծրագրեր.

2. Անհրաժեշտության դեպքում հատուկ որակավորում և հավաստագրում ունեցող կենսաբանական ոլորտի պատասխանատու(ներ).

3. Կենսաապահովության միջոցներ՝

ա. Տարածքի անվտանգության համակարգ (պատ/ցանկապատ, տեսանելիություն, մուտքի հսկողություն).

բ. Շենքի անվտանգության համակարգ (պատուհանների և դռների մուտքի հսկողություն, տեսահսկողություն, ազդանշանային համակարգ).

գ. Լաբորատորիայի անվտանգության համակարգ (դռների մուտքի հսկողություն, շարժման դետեկտորներ).

դ. BSL-3 տեսակի լաբորատորիայում/ՀՎՊ-ների պահպանման վայրում ՀՎՊ-ների նմուշների պահպանման անվտանգության համակարգ (դռների և պահեստի մուտքի հսկողություն, պաթոգենների հսկողության համակարգչային համակարգ).

ե. Համապատասխան ուսուցում ստացած պահակախումբ:

4. ՀՎՊ-ների հետ աշխատելու և պահպանելու կենսաանվտանգության ընթացակարգեր.

5. Կենսաանվտանգության և կենսաապահովության հետ կապված սարքավորումների պահպանման, ստուգաչափման, թեստավորման և հավաստագրման պահանջներ (մասնավորապես կոնկրետ ապրանքանիշերով կենսաանվտանգության պահարանների համար).

6. ՀՎՊ-ների հետ աշխատանքներում ընդգրկված անձնակազմի համար կենսաանվտանգության և կենսաապահովության կանոնավոր վերապատրաստումներ (ղեկավարներ, գիտաշխատողներ, կենսաանվտանգության ոլորտի պատասխանատուներ,

ինժինեռներ, աշխատանքի անվտանգության և ապահովության համար պատասխանատու անձնակազմ և այլն)։

7. Կենսաանվտանգության կառավարման ոլորտի կանոնավոր կազմակերպվող դասընթացներ լաբորատորիաների ղեկավար անձակազմի համար։

Բ. Դեպի լաբորատորիաներ և լաբորատորիաների միջև ՀՎՊ-րի նմուշների տեղափոխման անվտանգության ապահովում։

Երկարաժամկետ կայունությունը ապահովելու նպատակով կենսաանվտանգության և կենսաապահովության դասընթացները և համապատասխան հավաստագրումը կներդրվեն ուսումնական հաստատություններում (օրինակ կներդրվեն Երևանի պետական բժշկական համալսարանի և Հայաստանի պետական ագրարային համալսարանի ուսումնական ծրագրերում)։

VII. ՀՎՊ-ների հետ աշխատող լաբորատոր կառույցներ

Երկարաժամկետ ֆինանսական կարողությունների ներքո ՀՀ կառավարությունը կունենա առողջապահական և անասնաբուժական ոլորտների լաբորատորիաների կազմակերպված, կառավարվող, ինչպես նաև սարքավորումներով համալրված ցանց, որոնք անվտանգ, ապահով, արագ և հուսալի (համաձայն միջազգային չափանիշների, ներառյալ ՄԱԿ և ԿԱՀԿ)՝ ա) կիրականացնեն ՀՎՊ-րի կասկածելի նմուշների ախտորոշում և անհրաժեշտության դեպքում արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն կտրամադրեն համապատասխան մարմիններին հիվանդությունների բռնկիումներին արդյունավետ արձագանքելու համար և բ) կիրականացնեն ՀՎՊ-րի անհրաժեշտ հետազոտություններ։

ՀՎՊ-ների հետ աշխատող լաբորատորիաները կունենան ընթացակարգեր, համապատասխան որակավորում ունեցող անձնակազմ, որը կաշխատի համաձայն որակի կառավարման, կենսաանվտանգության և կենսաապահովության միջազգային չափանիշների (կենսաանվտանգության և կենսաապահովության համակարգի հիմնական պահանջները ներկայացված են Հավելված 2-ում)։

Անվտանգությունը բարձրացնելու նպատակով ՀՀ կառավարությունը ընթացակարգերի և կանոնակարգերի միջոցով կնվազեցնի լաբորատորիաներում ՀՎՊ-ների կուլտուրաների անջատումը։

Համաձայն և ի աջակցություն վերը նշված սկզբունքների ՀՀ կառավարությունը կունենա լաբորատորիաների հետևյալ ցանցը 2017թ. ՀՎՊ-ների հետ աշխատանքներ իրականացնելու համար.

Ա. Հանրապետական կտրվածքով.

1. Կենտրոնական նոր կառույց պետական կառույցներում պահվող ՀՎՊ-ների բոլոր հավաքածուների երկարաժամկետ/մշտական պահպանման և համալիր աշխատանքներ իրականացնելու համար։ Կառույցում կտեղակայվեն.

ա. BSL-3 տիպի փոքր լաբորատորիա՝ Առողջապահության և Գյուղատնտեսության նախարարությունների առանձնացված օգտագործման համար մանրէաբանական և վիրուսային կասկածելի ՀՎՊ-ների և տոքսինների հաստատող ախտորոշման համար, որի համար անհրաժեշտ է ՀԱԿ, ՄԷԲ և կենսաանվտանգության այլ միջազգային ուղեցույցներին համապատասխանող BSL-3 մակարդակի անվտանգություն և ապահովություն.

բ. Պահպանվող ՀՎՊ-ների նմուշների բոլոր հավաքածուները (BSL-3 տիպի լաբորատորիայում)։

գ. ՀՀ գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծությունների գիտական կենտրոնի (Ռիսկերի գնահատման կենտրոն կամ ՌԳԿ) և Անասնաբուժական սանիտարիայի և ֆիտոսանիտարիայի լաբորատոր ծառայությունների հանրապետական կենտրոնի (Անասնաբուժական լաբորատորիա) նախկինում ՀՎՊ-ների ախտորոշմամբ և հետազոտություններով զբաղվող բոլոր կարողությունները։ ՀՎՊ-ների հետ աշխատող լաբորատորիան/ները կլինեն BSL-2 տիպի։

դ. Առողջապահության նախարարության Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման կենտրոնում (ՀՎՎԿԿ) և Հիվանդությունների վերահսկողության և կանխարգելման կենտրոնում (ՀՎԿԿ) նախկինում իրականացվող բոլոր տեսակի ախտորոշումները և հետազոտությունները (ՀՎՊ-ների և ոչ ՀՎՊ-ների)։ ՀՎՊ-ների հետ աշխատող լաբորատորիան/ները կլինեն BSL-2 տիպի։

2. Առողջապահական ոլորտի այլ կառույցներ.

ա. «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի վիրուսաբանական լաբորատորիա և վարակազերծման մաս։ BSL-2 տիպի։

3. Անասնաբուժական ոլորտի այլ կառույցներ. բացակայում են

Բ. Մարզային կտրվածքով

1. Առողջապահության ոլորտ.(այնքանով, որքանով ՀՀ առողջապահության նախարարությունը (ՀՀԱՆ) կարող է ֆինանսապես ապահովել դրանց գործունեությունը հետագայում) Երևանից հեռու գտնվող մարզերում BSL-2 տիպի լաբորատորիաներում (օրինակ. Սյունիք, Շիրակ, Լոռի, Գեղարքունիկ, Տավուշ) կիրականացվի կասկածելի ինֆեկցիոն հիվանդություններ կրողների և/կամ շրջակա միջավայրի նմուշների նախնական ախտորոշում, քանի որ նմուշների տեղափոխումը Երևան (մոտակա տարածաշրջանային/մարզային ավելի խորացված ախտորոշում կատարելու հնարավորություն ունեցող լաբորատորիա) բավականին ժամանակատար է և անհրաժեշտ է ապահովել պատշաճ ժամանակում արձագանքում վտանգավոր հիվանդությունների բռնկումներին կամ ավելի արդյունավետ է։ Այդ լաբորատորիաներում կիրականացվի մոլեկուլային ախտորոշում։ Լաբորատորիաները չեն իրականացնելու կասկածելի ՀՎՊ-ների նմուշների կուլտուրաների անջատում։ Դրական պատասխանի դեպքում լաբորատորիան անմիջապես պետք է ա) վարակի տարածումը կանխարգելու նպատակով մեկուսացնի նմուշը; բ) տեղեկացնի դրական պատասխանի մասին և գ) փաթեթավորի և անվտանգ տեղափոխի դրական նմուշները Երևանում գտնվող ՀՎՊ-ների հետ աշխատող կենտրոնական կառույց։ Լաբորատորիաներում չեն պահվելու ՀՎՊ-րի որևէ դրական նմուշներ։

2. Անասնաբուժական ոլորտ. (այնքանով, որքանով ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը (ՀՀԳՆ) կարող է ֆինանսապես ապահովել դրանց գործունեությունը հետագայում) Երևանից հեռու գտնվող մարզերում BSL-2 տիպի լաբորատորիաներում (օրինակ. Սյունիք, Շիրակ, Լոռի, Գեղարքունիկ, Տավուշ) կիրականացվի կասկածելի ՀՎՊ-ների նմուշների նախնական ախտորոշում, քանի որ նմուշների տեղափոխումը Երևան (կամ

հարևան մարզում գտնվող լաբորատորիա, որը հնարավորություն ունի անցկացնելու խորացված ախտորոշում) բավականին ժամանակատար է և անհրաժեշտ է ապահովել պատշաճ ժամանակում արձագանքում վտանգավոր հիվանդությունների բռնկումներին: Անվտանգության նկատառումներից ելնելով լաբորատորիաները չեն իրականացնելու կասկածելի ՀՎՊ-ների նմուշների կուլտուրաների անջատում: Դրական պատասխանի դեպքում լաբորատորիան անմիջապես պետք է ա) վարակի տարածումը կանխարգելու նպատակով մեկուսացնի նմուշը: բ) տեղեկացնի դրական պատասխանի մասին և գ) փաթեթավորի և անվտանգ տեղափոխի դրական նմուշները Երևանում գտնվող ՀՎՊ-ների հետ աշխատող կենտրոնական կառույց: Լաբորատորիաներում չեն պահվելու ՀՎՊ-ների որևէ դրական նմուշներ:

VIII. Համաճարակաբանական կարողություններ

Ա. ՀՀ կառավարությունը կունենա և կիրականացնի միջազգային ստանդարտներին, այդ թվում ԱՀԿ և ՄԷԲ-ին համապատասխանող մարդու և կենդանիների հիվանդությունների հսկողության (ներառյալ ՀՎՊ-ների դեպքերի բացահայտումը) սահմանված պահանջներ, ստանդարտներ և ընթացակարգեր

Բ. Առողջապահության և անասնաբուժական ոլորտի համաճարակաբանները կսովորեն անալիտիկ մեթոդները, ինչպես նաև կծանոթանան ուսումնասիրությունների մշակման մեթոդներին և ընդհանուր բնույթի գործոններին, որոնք կարող են ազդել ուսումնասիրության եզրահանգումների վրա

Գ. Հիվանդությունների հսկողություն իրականացնող ինչպես հանրապետական, այնպես էլ շրջանային մակարդակի համաճարակաբանները և առողջապահության ոլորտի պաշտոնյաները (տեղական հիվանդանոցներ, համայնքային և դաշտերում աշխատող անասնաբույժներ) կստանան հիվանդությունների հսկողության և բռնկումների հետազոտման միջազգային հիմունքների ոլորտի ուսուցում, որն իր մեջ կներառի.

1. Հիվանդությունների դասակարգման նպատակով դեպքերի նկարագրերի կիրառում
2. Հիվանդությունների բռնկումների դեպքերի ճանաչում և դրանց արձագանքում
3. Բռնկումների դեպքերի մասին տեղեկացում և տեղեկացման գործընթացի և բռնկումներին արձագանքման վերլուծություն:

Դ. Համաճարակաբանական կարողությունների երկարաժամկետ կայունությունը ապահովելու նպատակով դասընթացները և համապատասխան հավաստագրումը կներդրվեն ուսումնական հաստատություններում, օրինակ Երևանի պետական բժշկական համալսարանի և Հայաստանի պետական ագրարային համալսարանի ուսումնական ծրագրերում՝ ներգրավելով այնպիսի միջազգային հաստատություններ, ինչպիսիք են ԱՀԿ/EURO/EPIET կամ TEPHINET-ը:

IX. ՀՎՊ-ի հետ աշխատող կլինիկական կարողություններ

Ա. ՀՀ կառավարությունը կունենա և կիրականացնի միջազգային ստանդարտներին, այդ թվում ԱՀԿ և ՄԷԲ-ին համապատասխանող ՀՎՊ-ների հետ աշխատող առողջապահության և անասնաբուժական ոլորտի բժիշկների համար սահմանված պահանջներ, ստանդարտներ և ընթացակարգեր

Բ. ՀՀ կառավարությունը կունենա միջազգային ստանդարտներին, այդ թվում ԱՀԿ և ՄԷԲ-ին համապատասխանող ՀՎՊ-ների հետ աշխատող առողջապահության և անասնաբուժական ոլորտի բժիշկների համար սահմանված կարողությունների, ուսուցման դասընթացների և հավաստագրման պահանջները

Գ. ՀՎՊ-ների հետ աշխատելու կլինիկական կարողությունների երկարաժամկետ կայունությունը ապահովելու նպատակով դասընթացները և համապատասխան հավաստագրումը կներդրվեն ուսումնական հաստատություններում (օրինակ Երևանի պետական բժշկական համալսարանի և Հայաստանի պետական ագրարային համալսարանի ուսումնական ծրագրերում):

X. Բոնկումներին արձագանքելու կարողություն

Ա. ՀՀ կառավարությունը կունենա և կիրականացնի միջազգային ստանդարտներին համապատասխանող ՀՎՊ-ների բոնկումներին (ինչպես առանձին առողջապահության և անասնաբուժության ոլորտների, այնպես էլ անհրաժեշտության դեպքում համատեղ) արձագանքման պահանջները, ստանդարտները և ընթացակարգերը, որոնք ներառում են.

1. Այն պաշտոնյաների որոշումները, որոնք պատասխանատու են լինելու արձագանքման գործընթացի կազմակերպման համար
2. Արձագանքման մեկնարկման համար անհրաժեշտ չափանիշը
3. Այն գործակալությունների և պաշտոնյաների որոշումները, որոնք մասնակցելու են արձագանքման գործընթացին, և համակարգման պահանջները
4. Արձագանքող անձնակազմի որակավորման և ուսուցման վերաբերյալ պահանջները
5. Արձագանքման համար անհրաժեշտ տրանստորտային միջոցների մոբիլիզացումը
6. Բոնկումների վայրում իրականացվող քայլերի ստուգացանկերը, այդ քայլերի իրականացման համար իրավական հիմքերը և իրականացման համար անհրաժեշտ ժամանակահատվածը

Բ. ՀՀ կառավարությունը կունենա բոնկումների արձագանքման համար աշխատակիցներ և սարքավորումներ (ներառյալ տրանսպորտային միջոցներ)

Գ. ՀՀ կառավարությունը բյուջեից միջոցներ կհատկացնի բոնկումներին արձագանքելու համար:

XI. Բոնկումների դեպքերի մասին տեղեկացման կարողություններ

Ա. ՀՀ կառավարությունը կունենա կասկածելի և հաստատված ՀՎՊ-րի հիվանդությունների բոնկումների և բոնկումներին ժամանակին և արդյունավետ արձագանքելու և հաղորդելու սահմանված պահանջներ, ստանդարտներ և ընթացակարգեր՝ օգտագործելով Հիվանդությունների հսկողության էլեկտրոնային համալիր համակարգը (ՀՀԷՀՀ)

Բ. ՀՀ կառավարությունը կսահմանի ՀՀԷՀՀ-ի համակարգիչների տեղադրման, ինչպես նաև տվյալների ՀՀԷՀՀ մուտքագրման համար անհրաժեշտ իրավական հիմքեր

Գ. ՀՀԷՀՀ համակարգիչները և համակարգչային ծրագրերը կտեղադրվեն ՀՀ առողջապահության, գյուղատնտեսության և արտակարգ իրավիճակների նախարարությունների հիվանդությունների վերաբերյալ տվյալներ ներկայացնող հիմնական կենտրոններում

Դ. Կապահովվի ՀՀԷՀՀ համակարգիչների ֆիզիկական պաշտպանվածությունը, ինչպես նաև հոսանքի և ինտերնետի անխափան մատակարարումը

Ե. Յուրաքանչյուր տեղամասում ՀՀ կառավարության կողմից կնշանակվեն աշխատակիցներ, որոնք պատասխանատու կլինեն անհրաժեշտ տվյալների մուտքագրման և հաշվետվությունների փոխանցման համար

Զ. ՀՀԷՀՀ-ի արձագանքման գործընթացում ընդգրկված բոլոր աշխատակիցները կմասնակցեն անհրաժեշտ դասընթացներին

Է. ՀՎՊ-ների արձագանքման կարողությունների երկարաժամկետ կայունությունը ապահովելու նպատակով ՀՀԷՀՀ-ի դասընթացները կներդրվեն ուսումնական հաստատություններում

Ը. Համապատասխան պետական կառույցներում կներդրվեն ՀՀԷՀՀ-ի համակարգիչների սպասարկման և վերանորոգման համակարգերը

Թ. ՀՀ կառավարությունը բյուջեից միջոցներ կհատկացնի ՀՀԷՀՀ-ի շահագործման և պահպանման համար, այդ թվում էլեկտրականության մատակարարման, ինտերնետի, ընդհանուր սպասարկման և համակարգիչների պարբերական փոխարինման համար

Attachment 1

HHS AND USDA SELECT AGENTS AND TOXINS
7 CFR Part 331, 9 CFR Part 121, and 42 CFR Part 73

HHS SELECT AGENTS AND TOXINS

Abrin
Botulinum neurotoxins
Botulinum neurotoxin producing species of *Clostridium*
Cercopithecine herpesvirus 1 (Herpes B virus)
Clostridium perfringens epsilon toxin
Coccidioides posadasii/*Coccidioides immitis*
Conotoxins
Coxiella burnetii
Crimean-Congo haemorrhagic fever virus
Diacetoxyscirpenol
Eastern Equine Encephalitis virus
Ebola virus
Francisella tularensis
Lassa fever virus
Marburg virus
Monkeypox virus
Reconstructed replication competent forms of the 1918 pandemic influenza virus containing any portion of the coding regions of all eight gene segments (Reconstructed 1918 Influenza virus)
Ricin
Rickettsia prowazekii
Rickettsia rickettsii
Saxitoxin
Shiga-like ribosome inactivating proteins
Shigatoxin
South American Haemorrhagic Fever viruses
 Flexal
 Guanarito
 Junin
 Machupo
 Sabia
Staphylococcal enterotoxins
T-2 toxin
Tetrodotoxin
Tick-borne encephalitis complex (flavi) viruses
 Central European Tick-borne encephalitis
 Far Eastern Tick-borne encephalitis
 Kyasanur Forest disease
 Omsk Hemorrhagic Fever
 Russian Spring and Summer encephalitis
Variola major virus (Smallpox virus)
Variola minor virus (Alastrim)
Yersinia pestis

OVERLAP SELECT AGENTS AND TOXINS

Bacillus anthracis
Brucella abortus
Brucella melitensis
Brucella suis
Burkholderia mallei (formerly *Pseudomonas mallei*)
Burkholderia pseudomallei (formerly *Pseudomonas pseudomallei*)
Hendra virus
Nipah virus
Rift Valley fever virus
Venezuelan Equine Encephalitis virus

USDA SELECT AGENTS AND TOXINS

African horse sickness virus
African swine fever virus
Akabane virus
Avian influenza virus (highly pathogenic)
Bluetongue virus (exotic)
Bovine spongiform encephalopathy agent
Camel pox virus
Classical swine fever virus
Ehrlichia ruminantium (Heartwater)
Foot-and-mouth disease virus
Goat pox virus
Japanese encephalitis virus
Lumpy skin disease virus
Malignant catarrhal fever virus
 (Alcelaphine herpesvirus type 1)
Menangle virus
Mycoplasma capricolum subspecies *capripneumoniae*
 (contagious caprine pleuropneumonia)
Mycoplasma mycoides subspecies *mycoides* small colony (*MmmSC*) (contagious bovine pleuropneumonia)
Peste des petits ruminants virus
Rinderpest virus
Sheep pox virus
Swine vesicular disease virus
Vesicular stomatitis virus (exotic): Indiana subtypes
 VSV-IN2, VSV-IN3
Virulent Newcastle disease virus¹

USDA PLANT PROTECTION AND QUARANTINE (PPQ) SELECT AGENTS AND TOXINS

Peronosclerospora philippinensis (*Peronosclerospora sacchari*)
Phoma glyciniicola (formerly *Pyrenochaeta glycines*)
Ralstonia solanacearum race 3, biovar 2
Rathayibacter toxicus
Sclerophthora rayssiae var *zeae*
Synchytrium endobioticum
Xanthomonas oryzae
Xylella fastidiosa (citrus variegated chlorosis strain)

11/17/2008

¹ A virulent Newcastle disease virus (avian paramyxovirus serotype 1) has an intracerebral pathogenicity index in day-old chicks (*Gallus gallus*) of 0.7 or greater or has an amino acid sequence at the fusion (F) protein cleavage site that is consistent with virulent strains of Newcastle disease virus. A failure to detect a cleavage site that is consistent with virulent strains does not confirm the absence of a virulent virus.

Կենսանվտանգության երկրորդ և երրորդ մակարդակների (BSL-2, BSL-3) լաբորատորիաների հիմնական պահանջների ամփոփ նկարագիրը

BSL-2 լաբորատորիաների հիմնական պահանջները, ի լրումն էլեկտրականության, ջրի, ջեռուցման և հեռախոսի, իրենց մեջ ներառում են՝

1. օդափոխության /ջեռուցման, օդափոխության և օդորակման/ համակարգ՝ օդի ներհոսքով. հոսանքի վարձավճարը կարող է կազմել տարեկան \$5,000-ից ավել
2. մուտքի վերահսկողության համակարգ
3. շենքի տեսահսկման համակարգ
4. շենք կատարվող ներխուժումների բացահայտման համակարգ(եր)
5. հակահրդեհային ազդանշանային համակարգ

BSL-3 լաբորատորիաների հիմնական պահանջները, ի լրումն էլեկտրականության, ջրի, ջեռուցման և հեռախոսի, իրենց մեջ ներառում են՝

1. մշտապես գործող (օրական 24 ժամ, տարեկան 365 օր) բացասական ճնշման ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգ. լաբորատորիայում, հանդերձարաններում և միջանցքներում տեղադրված այդ համակարգն ունի օդի ներհոսքի և արտահոսքի անգագանցիկ փականներ, ներհոսքի և արտահոսքի փականներ, և HEPA ֆիլտրում (սենյակի կամ խողովակների HEPA ֆիլտրման համակարգ). հոսանքի վարձը հավանաբար կկազմի տարեկան \$10,000-ից ավելի
2. էլեկտրական փականով փակվող՝ հանդերձարանի և սարքավորումների վարակազերծման սենյակների դռներ
3. մուտքի վերահսկողության համակարգ
4. շենքի տեսահսկման համակարգ
5. շենք կատարվող ներխուժումների բացահայտման համակարգ(եր)
6. հակահրդեհային ազդանշանային համակարգ
7. թափոնների վերամշակման համակարգ